ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Մխչյանի Ք. Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի /9 դասաժամ/ և ֆիզկուլտուրայի /18 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:Հարցազրույցի թույլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի.
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ).
- անձը հաստատող փաստաթուղթ.
-<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի մասին տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
- ինքնակենսագրություն (Ձև5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինգրքույկ.
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում).
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հաստատող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից-15:00-ը , բացի կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթն տեղի կունենա մարտի 26-ին՝ ժամը 14:00-ին, Արարատի մարզի Մխչյանի Ք. Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 043-45-19-52 կամ 093-96-55-01 հեռախոսահամարներով: